

կոս ավրէլիոսի զյառաջուց հայկական տպագրեալն վերաթարգմանէ եւ ի ֆռանկստան տպագրեւ » տայ :

Բայց ամենէն ընդարձակ եւ հետաքրքրական նամակը գրած է Բարութիւն Պետանեան, Սարգսի ձեռնասուն աշակերտը, զինքը փախցրնողը, եւ անշուշտ բժիշկ Պէտան Պէյի պապը (« Հանդ. Ամս. » 1896 էջ 47), որուն մէկ նամակն ալ հրատարակեց Տրդատ Եպ. Պալեան (« Արեւ. Մամուլ » 1905, էջ 465—8) : Պետանեան մեր այս նամակին մէջ կը ստորագրէ Սարգսի Պլլէն մեկնելէն հտեւ անցած դարձածները : Այս նամակն ամբողջովին կը հրատարակեմ : Առաջին նամակը Բասենցի Բարութիւն Արքեպ. ին է, գրուած Բարութիւն Պետանեանի ձեռք, եւ ստորագրուած Բասենցիէ, զոր նմանահանութեամբ կը գնեմ : Երկրորդը նոյն թղթին վրայ իբր շարունակութիւն գրած է Պետանեան 28 Հոկ. 7 Նոյ. 1772 առ Սարգիս Արքեպ. : Իսկ երրորդը նոյնպէս Պետանեան գրած է նոյն թղթին վրայ առ Յովհ. Վ. Նուրտինեան :

Մեծապ. և՛ Գևորգ. և՛ Կոստի իմոյ, յորոյում սրտիս անկեղծ մտօք սիրեցեկոյ յինէն Տեառն Սարգսի Արքեպիսկոպոսի Սեւաքոս Խնդալ միշտ և տէր :

Զբարեաւ մնայական գիրդ ընկալայ զողջոյնդ ի ձեռն իմ որոց մատչելի մատուցի, յորոց զդարձ փոխարինին ընկալիս ահա համբոյր յարգանաց : Իսկ սիրելի եղբայր իմ պատուական, բազում ցաւս